

նահանգներու բոլոր եկեղեցիներու մէջ: Երբ լուսեցաւ այս բանը իրենց աշխարհին (Հայաստանի) մէջ, զայրացան անոնք ասոնց վրայ, թէ՛ հոն մնացած եպիսկոպոսները եւ թէ՛ աշխարհին մարդիկ եւ գրեցին ասոնց խիստ խօսքեր, որուն մասին կը պահանջէ ժամանակս, որ լուսեամբ անցնինք: Այս պատճառաւ ալ բաժնուեցան ասոնք եւ անջատուեցան եւ ապա կազմեցին ասոնք սեպհական ժողով մեծ սրահի մը մէջ, ուր իրենց նախարարներէն մէկը կը բնակէր: Հոն հաւաքուեցաւ ընտիր համայնք մը իրենց կաթողիկոսին մահէն ետքը:

Բ. 24. Թէ Հայաստանի հատուածելէն ետքը ինչեր պատահեցան. եւ թէ մեծ դէպքերու յանձնարարական պատճառաւ ստիպուած ենք հրաժարիլ անոնց մասին խօսելէ եւ պատմելէ:

Շատ բան տեղի ունեցաւ մեր ժամանակները եւ մեր օրերը. եւ մասնաւորապէս վերջերս. եւ գրքի մը սահմանէն կ'անցնի, յատկապէս ինչ որ պատահեցաւ Պարսկահայաստանի Հռովմայեցիներուն անցելէն ետքը, որ եղաւ Աղեքսանդրի 880 տարւոյն¹³:

Ասոր հետեւութեամբ ծագեցան անդադար եւ յաճախ կոխներ ամէն կողմերէն եւ յառաջ եկան սարսափելի ասպատակութիւններ եւ մեծ արիւնհեղութիւններ: Այն ատեն միւսանդամ ոտք ելաւ Մողը իւր չարութեամբը եւ յարձակեցաւ հռովմէական բանակին վրայ (որ կը գործէր) Հայաստանի մէջ, որպէս զի, ինչպէս ինքը կը կարծէր, բնաջնջ գանոնք եւ ոչնչացնէ: Բայց երբ այս բանը չկրցաւ գլուխ հանել, թողուց գանոնք եւ անցաւ Հռովմէական Հայաստան, եւ կը յուսար առնել եւ նուաճել Կասպազովիկայի Կեսարիան: Բայց (հռովմէական) բանակները չըջապատեցին զինքը եւ չթողուցին որ Կասպազովիկա մտնէ. եւ երբ յարձակեցան անոնք իր վրայ եւ սպառապուռ ոչնչացուցին անոր բովանդակ փառքը, դարձաւ կորակոր. եւ եթէ զօրավարները միաբան միասիրտ ըլլային իրարու հետ, պիտի չկարենար անդամ կենդանուոյն ետ դառնալ: Ասոր վրայ հռովմէական Կայսրը առատապարգեւ եղաւ Հայաստանին, նուէրներով եւ ընծաներով եւ բանակով մը եւ կրկին բարձրացուց պայծառու-

¹³ 880 կը համապատասխանէ փրկչական 568/9 տարւոյն: Այլուր Յովհ. Եփեսացի գէպքը կը նշանակէ 882ին, այն է փրկչական 570/71:

թեան: Դարձեալ անցաւ բոլոր Պարսկահայաստանը Հռովմայեցւոց, նուաճուեցաւ եւ առնուեցաւ ի ստացուածս: Շատ անգամ տարին յաղթութիւններ. պարտեցին եւ նուաճեցին հզօր ազգեր: Բայց ամէնէն վերջը՝ կա՛մ զօրավարներու գէշ առաջնորդութեամբը կա՛մ որովհետեւ անոնք զԱստուած բազմադիմի կերպով թշնամանած էին, — թէպէտ թուով ոչ նուազ քան 100.000 էին, պարզ մարդպանի մ'առջեւ, որ 30.000 անգամ չունէր, բոլոր հռովմէական բանակներն ի փախուստ դիմեցին եւ փախան, կորսնցուցին իրենց զէնքերն եւ երկվարներն եւ այսպէս ամօթահար եղան: Ասկէ ետքը ամբարտաւանեցաւ պարսիկը, գրաւեց եւ նուաճեց բովանդակ Հայաստանը. եւ ամբողջ աշխարհը առաւ իրմէ խօսք եւ եղաւ իրեն անձնատուր: Այսպէս ետ դարձաւ բովանդակ աշխարհն եւ յանձնուեցաւ իրեն — բացի անոնցմէ, որոնք կը գտնուէին Կ. Պոլիս եօթը տարիէ ի վեր, սպասամբած էին անոր գէժ եւ կռուած անոր հետ¹⁴:

Ապա ուղարկուեցան երեւելի գեսպաններ երկու պետութիւններէն, քննելու իրենց մէջ պատահածը եւ նաեւ խաղաղութեան մասին բանակցելու: Այսպէս ալ եղաւ. անոնք աւելի քան տարի մը գէժ առ գէժ նստեցան, դատեցին եւ վիճեցին իրարու հետ, առանց բանի յանդերու...:

Չ. 11. Պարսկահայաստանի մասին, որ Հռովմայեցւոց անձնատուր եղած էր:

Այն պատճառներու մասին, զորոնք ունէին Պարսկահայերը դարու եւ իրենք զիրենք Հռովմայեցւոց յանձնելու, ժամանակի եւ հոն (տեղի ունեցած) շատ պատերազմներու եւ աւերածութիւններու վրայ, ինչպէս նաեւ այն մասին թէ անոնք Մայրաքաղաք եկան, ընդունուեցան Կայսեր կողմէն, ճոխացան մեծամեծ պատիւներով եւ շատ ընծաներով, եւ նման ուրիշ բաներու վրայ վերագոյն խօսեցանք արդէն համառօտիւ: Կ'ուզենք այժմ ըսել թէ հռովմէական Կայսրը այս բոլոր պատերազմները մղեց Պարսից գէժ, որպէս զի գանոնք, որոնք իրեն եկան եւ զրիստոնէութեան համար իրմէ օգնութիւն ինչդրեցին, չլքէ:

¹⁴ Բ. յեղ. 157. «(Կանայք նախարարաց) մատմբք իւրեանց փատաակեցին եւ կերակրեցան. եւ զկարգեալ ոտճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թռչակ աննէին եւ տային տանել նոցա ի միթիարութիւն»:

Երբ Կայսրը, այսպէս ըսենք, բոլոր Հայերը պարզեւնեցով եւ առատատուր նուէրներով օժտեց եւ անոնց նաեւ երեք տարուով հարկերը շնորհեց, պարսիկը ըսաւ անոր. ի՞մ ծառաներս ինձի ետ տուր, որոնք ինձի գէժ սպասամբած են: Բայց անիկա չլսեց անոր: Այն ատեն պարսիկը խորամանկ գտնուեցաւ եւ դարձաւ նամակներով Հայոց (ըսելով անոնց թէ) ինքը չ'ուզեր անոնց որ եւ է չարիք հասցնել եւ (իրենց ըրած) յիմարութիւնը յիշել¹⁵: Ասոր վրայ անոնք միւսանդամ հատուածեցան Հռովմայեցիներէն, եւ բովանդակ աշխարհն գնաց եւ հպատակեցաւ (Պարսիկին), ի բաց առեալ այն գլխաւորները, որոնք Կ. Պոլիս Կայսեր քովն էին, այս ինքն բովանդակ աշխարհն (Պարսկահայաստան), գրեթէ 20.000 հոգի հատուածեցաւ եւ գնաց եւ անձնատուր եղաւ Պարսիկներուն: Անիկա (Պարսիկին) ետ դարձաւ եւ գրաւեց Հայաստանը այնպէս ինչպէս յառաջ: Իսկ իրենց գլխաւորները, անոնց մէջ մէկը՝ Վարդան անունն եւ բոլոր իր ընկերները եւ այն ժողովրդեան (Վրաց) թագաւորն Գորգոնիոս (Գուրգէն) անուամբ, իւր բոլոր ժողովրդեան (չօրքին) հետ, որոնք իրենք զիրենք Հռովմայեցւոց անձնատուր ըրած էին, որ նմապէս մայրաքաղաքին մէջ կը բնակէր մեծ պատուով, եկան եւ յանձնուեցան Յուստինոս Կայսեր անոր թագաւորութեան հինգերորդ տարին, այս ինքն Աղեքսանդրի 882 տարւոյն. եւ այս պատճառաւ անոնց համար տարիներ շարունակուեցան կոխները:

Չ. 10. Թէ ի՞նչ պատահեցաւ ի վերջոյ Հռովմայեցւոց Պարսկահայաստանի մէջ:

Հռովմէական զօրավարները փառաւոր յաղթութիւններ տանելով եւ շատ ճակատանքներով մէջ յաղթող ելլելով՝ կոտորած էին իրենց գէժ զրկուած բանակներու մեծագոյն մասը. յաղթահարած եւ նուաճած էին Պարսից հպատակ բոլոր հիւսիսային ազգերը, միջամուխ եղած էին եւ աւերած շատ փար-

¹⁵ Գ. 72. «Գրէր եւ ցուցանէր հանտապարդ նա (տէրն Սիւնեաց), իր թէ ամենայն Հայք զինի իւր միարանեցին. եւ գնոյն զիւր մեծաւ զգուշութեամբ գաւորանիստ քաղաքն Կայսեր (Կ. Պոլիս). մինչեւ զսուրբ եպիսկոպոսացն (Հայոց գաղտնի ի Կ. Պոլիս) զսուրբ եպիսկոպոսացն և ուժացոյց ի նոցանէ. եւ զամենայն զօրան գմիտան եւս ուժացոյց ի նոցանէ. . . Երբնայր եւ Յունաց յերկրայս արար յուխտէն: . . Երբնայր եւ հաստատէր եւս եւ զամենայն հրաման թողութեան հատատէր եւս եւ զամենայն հրաման թողութեան որ ի Յունաց աշխարհին, լսել զայն արարութեամբ որ ի Յունաց աշխարհին, լսել զայն արարութեամբ որ ի Յունաց աշխարհին եւս ի նոյն յիզեալ տապալ ի ձեռն նորա առաւել եւս ի նոյն յիզեալ տապալեցան»:

սաններով պարսկական հողամասեր, (յառաջացած էին) մինչեւ պարսկական մայրաքաղաքին երեք փարսախ (մնացած)¹⁶, աւարած եւ դերած էին Պարսիկներէն շատ փղեր, այնպէս որ փղերով լեցուեցաւ Կ. Պոլիս. եւ շատ բանի մէջ, որ կ'անցնի պատմութեան սահմանէն, յաղթանակած էին, բովանդակ Պարսկաստան կը սարսէր անոնց առջեւ եւ պարսիկ թագաւորը ի վերջոյ դարձած էր իւր երկիրը Աղեքսանդրի 880 տարւոյն¹⁷. Հռովմայեցիք անհոգ էին եւ հպարտ իրենց հոչակին վրայ, իբրեւ մարդիկ, որոնք թագաւորի մը հետ կռուած եւ յաղթական եղած էին: Այն ժամանակէն ի վեր կ'ապրէին աներկիւղ, որպէս թէ ամէն կռուէ եւ պատերազմէ ազատած եւ հանգստանալու ժամանակն ըլլայ: Ուստի բոլոր գունդերը սկսան լի վստահութեամբ իրենք զիրենք անհոգութեան տալ, զէնքերը մէկգլխի գնելով եւ իրենց երկվարները արօտ հանելով: Եւ ահա յեղակարծումն եկան իրենց լրտեսները եւ ըսին. Արիք եւ զինուեցէք, պարսկական բանակը Տամ-Պոտրովի առաջնորդութեամբ ձեր վրայ կու գայ. զգոյշ եղէք: Երբ լսեցին անոնք, ծիծաղեցան եւ հեգնեցին գանոնք (լրտեսները) եւ ըսին. Ասոնք (Պարսիկները) կրնա՞ն համարձակիլ եւ իրենք զիրենք մեզի ցոյց տալ: Եւ չէին հաւատար եւ ուզեր վառիլ ի գէն: Մինչդեռ անոնք այսպէս կը խօսէին, պարսկական բանակը հասաւ անոնց վրայ. եւ որովհետեւ անոնք գեռ վառուած պատրաստուած չէին անոնց հետ պատերազմելու, կ'ուզէին անոնց իրենց գէժքն միայն ցոյց տալ: Բայց երբ տեսան, թէ անոնք երկար շարքեր, ինչպէս պատուարներ կը տարածուին եւ կը յառաջնեն, զիրենք նախ ահն եւ սարսափը տիրեց եւ

¹⁶ Գ. 53. «Յարձակեցան ոմանք յԱտրպատական աշխարհն, եւ ի տեղիս տեղիս բազում քնաս արարին, առնելով եւ աւերելով եւ քանդելով զբազում ասորւշահան»...: 59. «Դարձեալ յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ ի վերայ բերդիցն եւ քաղաքացն, զոր ունէին պարսիկն յաշխարհին Աղուանից»...: 61. «Եւ գունդս դուռոս արձակէր (Վարդան) յաշխարհն Սիւնեաց, առնոյր եւ աւերէր զբազում գաւառս. եւ այնպէս ի նեղ արկանէր դնաւ եւ զամենայն զօրսն որ ընդ նմա էր, զի գէշաւ եւ գմիս մեռելտախ առ ոմայն վտանգի անխտիր ուսէին: Եւ բազում հարուածս հասուցանէին ի վերայ ուրացելոցն. մինչեւ ժողով սուրբ եպիսկոպոսացն եւ ամենայն ուխտ քահանայութեանն դառնապէս արտասուս իջուցանէին ի վերայ շարաշար վշտացելոցն, որ բոկ եւ հեախ վարէին զարս եւ զկանայս փափկասունս, եւ բազում սղայք դբարի հարեալ ընկեցան յանցս ճանապարհաց: — Եւ իբրեւ այս ամենայն աշողութիւն լինէր երկիւղածոցն Աստուծոյ»...:

¹⁷ Իմա՛. 885 = 575/6. Կ'ակնարկուի Մելիտինէի առջեւ Պոտրովի կրած պարտութիւնը:

մատուցան շփոթի, վասն զի ոչ իսկ հաւաքուած էին եւ իրենք զիրենք ցիր ու ցան ըրած էին, իրենք զիրենք ուսելու եւ խմելու եւ շուստութեան անձնատուր ընելու համար: Չայս տեսնողները սարսափեցան եւ սկսան փախչիլ. ոմանք տեսնելով ուրիշներն ի փախուստ դիմած, իրենք ալ վախցան եւ փախան նոյնպէս. եւ զօրավարները տեսնելով թէ իրենք լքուած են եւ զօրքը խոյս կու տայ իրենցմէ, փախան նոյնպէս իրենք: Ամէն մարդ, որ իւր գէնքն առնել եւ երկվարն բերել կարողացաւ՝ նստաւ ձի եւ փախաւ: Ով որ գէնքով հետիոտս կը փախչէր, երբ կը տեսնէր թէ գէնքը արգելք կ'ըլլայ իւր ընթացքին, կը նետէր գէնքը ճանապարհին եւ կը փախչէր անգէն. եթէ մէկը նստած էր ձի, եւ գէնքը արգելք կ'ըլլար, ի բաց կը նետէր գայն: Երբ կը խոնջէր ձին, վար կ'իջնար եւ կը փախչէր ոտքով: Այսպէս առանց հետապնդելու կ'երթային անոնց ետեւէն պարսիկները հանդարտօրէն, կը հեզնէին միայն եւ կը ծաղրէին եւ կը ծիծաղէին, որ անոնք 150.000 էին եւ իրենք ոչ աւելի քան 30.000, եւ իրենցմէ այնպէս սարսափած եւ ի փախուստ ձեպած էին, մինչդեռ անոնք իրենց թագաւորէն չէին վախցած եւ փախստի չէին դիմած: Այսպէս ի վերջոյ անհամբաւ եղան հոռոմէական բանակներն եւ հրամանատարները, որովհետեւ պարսիկներն սուրն անդամ չէին հանած անոնց դէմ կամ աղեղն լարած կամ տէգ մը արծակած անոնց վրայ: Բայց ժողովեցին անոնք անոնց գէնքերն եւ մթերքները, զրահներն եւ վահանները, սաղաւարտները, նիզակները, սուրբերը, աշտէները, աղեղներն եւ կապարձներն եւ անհամար նետերը: Բայց ի վերջոյ ըսուեցաւ եւ ամէն մարդ պատմեց, թէ այս բանը եկաւ Հոռոմայեցիներուն գլուխը, վասն զի բարկացուցած էին զԱստուած: Այս ինքն երբ անոնք հիւսիսային գաւառները (Սիւնիք եւ Աղուանք) արշաւեցին, որոնք քրիստոնեայ էին եւ ընդատաջ եկան անոնց քահանաներով, աւետարաններով եւ խաչերով¹⁸, նկատուած չըրին անոնց: Վերջապէս Հոռոմայեցիք անաստուածութեամբ եւ ամբարտաւանութեամբ կը բռնէին մէկ եւ երկու տարեկան տղաքը, ապա մէկը կամ միւսը կը բռնէին ոտքէն, կը նետէին վեր ուրքան կրնային. ուրիշները երբ վար կու գար (տղան) նիզակներու կամ սուրբուր վրայ կ'առնէին եւ կը ծակծակէին եւ կը նետէին շներու առջեւ¹⁹: Նաեւ կրօնաւորները կ'անարգէին, կը սպաննէին եւ կը կողոպտէին: Նոյն իսկ միանձնաւորները, որոնք երկար տարիներէ հետէ առանձնակեաց կեանք կ'ապրէին, կը քարչէին միանձնարաններէն դուրս, ծերունի եւ պատուական մարդիկը, կը հանէին կախաղան, կը չարչարէին եւ կը կտրատէին սուրբերով անոնց ամօթոյքը ըսելով անոնց. Ոսկի եւ արծաթ բերէք մեզի: Այսպէս կը չարչարէին նաեւ հաւատաւոր կուսանները, դառն մահուամբ սպաննելով զանոնք: Այս անօրէն դործերու համար, զորոնք, ինչպէս կ'ըսուի, դործեցին անոնք, բարկացուցին զԱստուած եւ անիկա ալ ամօթահար ըրաւ զանոնք եւ խորտակեց թշնամիներու առջեւ. այնպէս որ չկրցան անոնց դիմակալ ըլլալը:

Ս. յսպէս Յովհաննէս Եփեսացի:

19. ՍԵՔՒՈՍ ԵՒ ԵՂԻՇԷ

Տեսանք վերադոյն (§ 3) թէ Սերիոս չէր ճանչնար բաց ի Ղ. Փարպեցիէն ուրիշ աղբիւր վարդանանց պատմութեան համար: Բայց անիկա կ'երեւայ թէ կարդացած է «Հայոց պատերազմի» պատմութիւնը, թէ եւ յանուանէ չի յիշեր աղբիւրը, ինչպէս նաեւ չի յիշեր Վահան Մամիկոնեանի կուրծներու համար իբրեւ աղբիւր Ղազար Փարպեցւոյ Գ. դրուաղը, թէպէտ ծանօթ է անոր: Այն մանրամասնութեանց համար, զորոնք կ'աւանդէ Սերիոս 570—596 շրջանի գէպերու մասին, հարկ է զբաւոր աղբիւր մ'ենթադրել իւր ձեռքը:

Եղիշէի Պատմութիւնն էր այն, թէ ուրիշ երկրորդ աղբիւր մը¹: Յամենայն գէպ Սերիոսի հաղորդած տեղեկութիւններն ունին իւր ձեռքը:

¹⁸ Հմմտ. Գ. 72. «Մանաւնդ զի ի ձեռն սուտ քահանայիցն պատրէր (տէրն Սիւնեաց) եւ խարէր իբրեւ ճշմարիտ մարդովք, աւետարան հանդերձ խաչիւ տայր տանել (ընդատաջ ուխտապահացն զօրաց) եւ զիւր գամենայն ստատանայական ստութիւնն նոքօք ծածկէր»:

¹⁹ Հմմտ. ծան. 16: ¹ Սերիոս, էջ 46 յառաջ կը բերէ Սուրբ Բ. ի կրօնական ազատութեան հրովարտակը, ուր կ'ըսուի. «Մի ոք յանօրինաց իշխեցէ դառնալ ի քրիստոնէութիւն, եւ մի ոք ի քրիստոնէից դարձցի յանօրինութիւն»: Հոս անօրէն եւ անօրինութիւն գործածուած է զբաղաշտական եւ զբաղաշտական կրօն իմաստով: Եւ զիւրիցս կը գործածէ նոյնը՝ «պաշտօնեայք ամեն զիւրիցս կը գործածէ նոյնը» (էջ 11 եւ 16) հաւասար իմաստով: Բարչառութեանն» (էջ 11 եւ 16) հաւասար իմաստով: Բառին այս կ'իրաւութիւնն թէ ոչ աղբիւրի նոյնութիւն, բայց ապահովապէս ժամանակակիցութիւն կը մատնանշեն:

² Հմմտ. Հ. Ն. Ա. կ. ի. ն. ան, Մատենադարանի հետազոտութիւններ: Հատոր Բ.: Վիեննա 1924, էջ 32 եւ յով:

³ Տպ. թագաւորութեանն:

ներքին աղերս մը Եղիշէի Պատմութեան հետ: Իր աղբիւրը, յատկապէս Վահրամ Չորինի ապստամբութեան վերաբերեալ մասին մէջ կը բոլորէ Յունական բաժնէն: Մանրամասնութիւնները, որոնք 590 եւ 596 տարիներու գէպերու մասին են, եւ Կայսերական բանակի արշաւանքը կը նկարագրեն Վահրամի դէմ՝ Սուրբ Բ. ըր զահ բարձրացնելու համար, զրի առնուած են յունական ծառայութեան մէջ գտնուող անձէ մը: Այս տեղ ահա մայ մեր միտքը կու գայ Եղիշէի խոստումը, որ ճիշդ այս գէպերու վրայ խօսած ժամանակ կը խոստանար. «Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի»: Եւ արդեօք ճիշդ այս չէ՞ր, որ աղբիւր եղած է Սերիոսին:

Սերիոս զիտէ մանրամասնօրէն 591 տեղի ունեցած գէպերը, այս ինքն Վահրամ Չորինի պարտութեամբ Սուրբ Բ. կ'ապահովէ իւր դահն եւ հոռոմէական-հայկական զինական բանակը կը վերադառնայ բիւզանդական սահման: Վաստա՞ն ապստամբութիւնը, որ անկէ ետքը տեղի ունեցաւ, նոյնպէս անձանօթ չէ մնացած Սերիոսին (էջ 45—61):

Ըմբռնելու համար 570—590 տարիներու իրադարձութիւնները, կարեւոր է կից Յովհ. Եփեսացւոյ տեղեկութիւններուն լսել նաեւ ինչ որ կը պատմէ Սերիոս:

Դժբախտաբար ճիշդ այս մասերու մէջ կրած է Սերիոսի բնագիրը թղթերու ետեւառաջութիւն, խանգարում, նաեւ անկում²: Մեր յառաջընթացութեան մէջ ջանացած ենք վերականգնել Սերիոսի բնագիրը հնարաւորութեան սահմանին մէջ, ուղղելով թղթերու ետեւառաջութիւնը:

Սերիոս.

«Եւ եղև ի Ս. ամի թագաւորութեան Սոստոյայ՝ որդւոյ Կաւստայ՝ ապստամբեաց Վարդան. եւ ի բաց եկաց ի ծառայութենէ թագաւորին՝ Պարսից հանդերձ միաբանութեամբ ամենայն Հայաստանեաւք: Սպանեալ զՍուրէնն մարդպան յանկարծաւրէն ի Դուրին քաղաքի, առին զաւար բազում եւ զնացին ի ծառայութիւն Յունաց:

Յայնժամ յառաջ քան զայս ապստամբեալ ի բաց եկաց ի Հայոց՝ անհուանեալ Վահան

իշխան աշխարհին Սիւնեաց, եւ խնդրեաց ի Սոստոյայ յարքային Պարսից, զի տարցեն զգիւան աշխարհին Սիւնեաց ի Դուրայ ի Փայտակարան քաղաք, եւ կարգեսցէ զքաղաքն շահմար Ատրպատականի. զի մի՛ եւս կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա: Եւ կատարէր հրամանն:

Իսկ առ Հայոց երդնոյր թագաւորն Յունաց, եւ հաստատէր զնոյն ուխտ՝ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց՝ երանելոյն Տրդատայ եւ Կոստանդիանոսի. եւ տայր նոցա զղաւթն կայսերական յաւանութիւն: Եւ նոցա առեալ զգաւրն՝ զիմեցին ի վերայ քաղաքին Դուրայ, եւ պաշարեալ կործանեցին ի վայր. եւ հալածեցին զգաւրն Պարսից՝ որ ի նմա կային: Բայց եհաս ի վերայ նոցա յանկարծաւրէն խռովութիւն մեծ. զի զեկեղեցի սրբոյն Գրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն, էին արարեալ համբարանոցս Պարսիկիքն. հարին հուր եւ այրեցին. վասն որոյ եղև նոցա խռովութիւն մեծ» (էջ 26):

Սերիոսի մէջ հոս թղթի մ'անկում կայ: Շարունակութեան համար տես էջ 29.

«Եւ արդ այս են զաւարավարք արքային Պարսից՝ որ եկին մի ըստ միովէ յերկիրս Հայոց՝ յապստամբութենէ Վարդանայ Մամիկոնից տեսուն՝ որդւոյ Վասակայ մինչեւ ցայսուր ժամանակի. ոմանք մեռան ի պատերազմի եւ ոմանք պատերազմեցան եւ ոմանք յաղթութիւն գործեցին եւ զնացին:

Յորժամ սպանին զՍուրեն մարդպան, ի նմին ամի եկն Վարդան Վշնապ ոմն, եւ գործ ինչ ոչ գործեաց. եկաց ամ մի եւ զնաց:

Ապա եկն եւ Գողոնն Միհրան քսան հազարաւ զաւրաց սպառազինաց եւ փղաք բազմաւք. եւ ունէր նա ընդ ինքեան սատարս բազումս ի ճամբարէ անթիւ ազգացն, ընդ որս բնակեալն են ընդ լեռնակողմամբ Կովկասու ազգք Հոնաց. եւ հրաման յարքայէն զի անձետս արատցեն զարս ի յաշխարհէն Հայոց՝ իւլել, բրել, յատակել, անինայ յերկիր կործանել: Եւ եկեալ նա» |||| (հոս թողթ մ'իւնկած է Սերիոսի մէջէն. Հմմտ. առ այս էջ 26). «Գայ ապա ի վերայ նորա (վարդանայ) Միհրանն Միհրեանդակ քսան հազարաւ զաւրու եւ փղաք բազմաւք: Եւ եղև պատերազմ մեծ ի դաշտին Սաղամիսայ. հարեալ զգաւրն Պարսից անհնարին հարուածովք մաչէին (զօրքն վարդանայ) ի սուր սուրբաց, զփիղսն զամենայն թափէին»:

(Շարունակութիւնը տե՛ս էջ 29) . «Եւ Մի-
հրանն սակաւուք պրծեալ զնայցին յերկիրն
իւրեանց : Բայց եթէ ուրեք յանմատոյց ամ-
բոցաց ուրեմն մնացեալ ապրեցան մարդիկ .
եւ կամ թէ ուրեք ի հեռագոյն աշխարհս
փախտաւան զնայցին : Բայց սակայն ոչ կա-
րացին բազումք ճողոպրել . քանզի զորս
գտանէին (Հայք)՝ սուր ի վերայ եղեալ սա-
տակէին : Սա արար կոխ մի ի Վիրս եւ պար-
տեցաւ : Եկն ի Հայս եւ առ զԱնկղ սուտ երգ-
մամբ» :

(Ապա եկն) Փիլիպպոս Սիւնեաց տէր,
արար կոխ մի ընդ Քաղաք եւ ընդ Խաղա-
մախիս . եւ կոխ մի ի Վանանդ՝ ի յԱլթմսու
զեղ . եւ յերկսեանն պարտեցաւ . եկաց նա
ամ(իս)ս եւթն ի զնայց» :

Ապա եկն ինքն արքայն Անուշ Ըռուան
Խոսրով [շար. 34], որպէս ասացի՜ : Եւ
արար պատերազմ մի մեծ ի Մելիտինէ, յո-
րում պարտեցաւ եւ զնայց» :

«Այս Խոսրով, որ կոչեցաւ Անուշ Ըռուան,
ի ժամանակս իւրոյ թագաւորութեանն՝ յա-
ռաջ քան զապստամբութիւնս զայս՝ հաստա-
տեաց զերկիր, քանզի էր խաղաղասէր եւ աշ-
խարհաչէն : Եւ ի լինել ապստամբութեանն
այնորիկ՝ յայնմ հետէ ընդոստուցեալ զար-
թեալ ի բարկութիւն՝ զանձն անվրաս համա-
բեալ, իբր թէ Հայք էի ամենայն երկրի եւ
ոչ տէր . եւ սնուցեալ զամենեւեան իբրեւ
(գ)որդի եւ սիրելի . եւ արդ, ասէ, ի նոցանէ
ինդրեցէ Աստուած զարիւնս զայս» :

«Այս Խոսրով ի ժամանակս իւրոյ թագա-
ւորութեան կապեաց զպահակն ճորայ եւ
Աղուանից : Կարաւ ձերբակալ զարքայն Եղե-
րացոց : Եւ ա՛ռ մարտիւ զԱնախոք [Պիլի-
բացոց] եւ զերեալ նստոյց առ թագաւորա-
կան կայանին՝ շինեալ քաղաք եւ անուանեալ
զնա Վեհ-Անշատոք-Խոսրով, զոր անուանեալ
Շահաստան ի Նոկ Ռոմ՝⁵ կոչեն : Եւ ա՛ռ
սա զԴարա եւ զԿաղնիկոս . զերեաց ասպա-
տակաւ եւ զկողմանս Կիւղիկէացոց : — Կա-
լաւ սա զթագաւորութիւնն ամս ԽԸ» (էջ 28) :

⁴ Այս պատերազմի մասին աւելի ընդարձակ կը
խօսի Մերիտո էջ 26—27 . «Այս այն Վարդան է, յորոյ
վերայ եկն արքայն Պարսից՝ կոչեցեալ Անուշ Ըռուան
Խոսրով» . . . : Յետոյ առիթ պիտի ունենանք լսելու
հաստատման ամբողջութեամբ :

⁵ Տպ. Շահաստանին Ոկնոյ : Այս ինքն շահաստան
Նոր-Հոմ = միջին ասորի . Şahrestan i Nok-(H)rom .
Համոտ . այս սրբագրութեան մասին J. Marquart, Ar-
menische Streifen, Յուլիանի, Վիեննա 1911,
էջ 300—301 եւ Ակիւնեան, Մատենադր. Հետազոտու-
թիւններ, Բ. էջ 92 :

«Ապա եկն Տամ-Խոսրով . եւ արար երկու
կոխս . մի՛ ի Բասեան ի Բոլորապահակի,
ուր Մուրց եւ Երասի խառնին : Եւ մի՛ ի
Բագրեւանդ ի Կըթնի : Եւ յերկոսինն յաղ-
թութիւն զործեաց մեծամեծ . եկաց երկուս
ամս եւ զնայց :

Ապա եկն Վարազ-Վղուրն եւ արար կոխ
մի ի Վանանդ ի յԱլթմսու զեղ . որ եւ նախ
վանեցաւ եւ ապա յաղթեաց . եկաց ամ մի եւ
զնայց :

Ապա եկն Ասպետն մեծ Պարթեւն եւ
Պալհաւն . եւ արար կոխ մի ի Շիրակ եւ յաղ-
թեաց . եկաց եւթն ամ եւ զնայց :

Ապա Հրահատն մարգպան, որ զնայց ի
Մծբին (տպ. Մրծունին) իւրայնոցն սատար
ի պատերազմ . եւ անդ նոքա պարտեցան եւ
ապա յաղթութիւն ստացան : Եւ անտի դար-
ձեալ՝ արար կոխ մի ի Բզնունիս ի Ծաղկա-
ջուրն եւ յաղթեաց : Եկաց չորս ամիսս եւ
զնայց :

Ապա եկն Հրարտին-Դատան մարգպան :
Ապա այնուհետեւ ոչ կարացին Պարսիկքն
պատերազմաւ զդէմ ունել զաւրացն Յունաց :
Առ սովաւ սպանաւ Որմիզդ . եւ թագաւո-
րեաց որդի նորա Խոսրով (590) : Եկաց ամս
երկուս եւ զնայց» (էջ 34) :

Յաջորդ շրջանի (590—596) զէպքերն են
ինչ որ կը պատմէ Սերիոս էջ 33—61 Խոսրով
Բ. ի գահակալութեան եւ Վահրամ Չորինի եւ
Վաստմի ապստամբութեան շուրջը :

(Շարունակելի) : Զ. Ն. ԱԿՆՆԵՆՆ



ՍԵՊԱԳՐԱԿԱՆՔ

ՀԱԹԵՐ ԵՒ ՈՒՐԱՐՏԵԱՆՔ

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն) :

7. — Հակառակ այն իմաստուն խոր-
հրդեան՝ ինչպէս կաւկասեան նոյնպէս որեւէ
նոր լեզուի արդի ձեւերով չիորձել համե-
մատելու եւ մենկելու մանաւանդ բեւեռա-
գրական հին լեզուները, շատերը փորձած են
մինչեւ անգամ բեւեռագրական ծանօթ ամե-
նահին լեզուին կամ զրուիթեան ոճը՝ Սուսե-
րարէնը՝ մեկնելու աշխարհիս զանազան կող-

մերու եւ այժմ իրարու անմիասնական լե-
զուներու նաեւ նորագոյն ձեւերով : Քանի որ
համեմատուած լեզուներուն մէջ կը գտնուի
նաեւ Հայերէնը, հարկ է այս մասին այլեւայլ
դիտողութիւններն ընել այս տեղ, եւ այն՝
նախ Սուսերականին մասին :

Մեր նպատակը չէ անշուշտ Սուսերա-
կանին հետ կապուած խնդրոց մասին երկա-
րօրէն խօսիլ : Բայց կարեւոր կէտ մը՝ որ
արդէն կենսական է բոլոր յաջորդ համեմա-
տութեանց համար՝ նոյն իսկ այսպէս ըսե-
լու համար ի հիմանց եւ սկզբամբ, պէտք է
զոնէ համառօտիւ պարզուիլ : Խնդիրն է թէ
Սուսերական կոչուածն իրօք հին լեզու մըն
է թէ պարզապէս հին գրչաբեան կերպ մը :
Այսօր անշուշտ Սուսերագիտաց մեծամաս-
նութիւնը նոյնն իբր լեզու մը կը նկատէ,
բայց նաեւ գոնէ այլեւայլ արուեստական մա-
սերով՝ բեւեռագիր Դպրաց հին դպրոցին
կամ դպրոցներու աղղեցութեամբ : Բարեկա-
կան-սուսերական⁹⁸ յիշատակարանաց մեծ
մաս մը գրուած է լեզուաւ մը՝ որ առաջին
տեսութեան՝ ոչ-սեմական նկարագիր ունի :
Չասի արդէն հին նշանաւոր ասուրագէտներ՝
Ինչպէս Օպպերտ, Լէնորման⁹⁹ եւ ուրիշներ
կը համարէին բարեկական ոչ-սեմական բայց
իրական լեզու մը, զարեւրով գործածուած,
զոր՝ Սեմացոց Բարեկաստանի տիրելէն
եւ Սեմացոց առիւն եւ իբրեւ քաղա-
քակրքական լեզու պահպանելու եւ զարգացու-
ցին ուսմամբ : Արդ այս լեզուն է զոր սովո-
րութիւն եղած է կոչել Սուսերարէն՝ Սուսերի-
տանի հնագոյն ոչ-սեմական ժողովրդեան՝
Սուսերաց անուամբ, մինչ Հիւսիսային Բա-
բելաստանի արդէն կանուխէն զուտ սեմա-
կան լեզուն կը կոչուի Աքասերէն : Այս յոր-
ջորջանները հին են . եւ Կոյունջուկի մէկ
աղիւսագիրը, որ կրկնալեզու է կամ այնպէս
կը համարուի, եւ որուն վրայ զոյգ թուով

տողերը գրուած են ասուրերէն, իսկ ան-
շուշտերը՝ տարբեր կերպով, կը նշանակէ թէ՛
šaplis akkadā eliš šumēra, այսինքն՝ Վերին
ակիասերէն, վարինը՝ սուսերարէն : Սովո-
րարար կ'ընդունուի թէ Սուսերարէն տակա-
ւին կենդանի էր Ն. Ք. Ի. Գ. դարուն՝ Համ-
մուրարեաց օրով :

Հակառակ այս ամէնուն նոյնպէս նշանա-
ւոր եւ պէտք է ըսել կորովամիտ ասուրա-
գէտ մը՝ Հայկվի՝ արդէն անցեալ դա-
րուն վերջին քառօրդին առաջին տարիներէն
սկսեալ բազմաթիւ գրութիւններով՝ ինչպէս
զիստորաբար վերը յիշուած Օպպերտ ու
Լէնորման՝ նոյնպէս ուրիշ զիստոց դէմ մա-
քառած է բազմաթիւ գրութիւններով, փոտե-
լով թէ սուսերարէն կոչուածն իրական լե-
զու մ'ըլլայ, այլ միայն՝ զրուիթեան տար-
բեր կերպ մը : Իւր բոլոր փաստերուն ամ-
փոփոյք մ'ըրած է երկասիրութեանս մէջ՝
«Համառօտութիւն ասուրարեկական այլա-
գրութեան¹⁰⁰» : Այս տեղ ամէն կարգի ապա-
ցոյցներով կ'ուզէ ջրել այն կարծիքը, որ իբր
«անհեթեթ մղձաւանջ մըն է, կ'ըսէ, եւ 60
տարիէ ի վեր ոգիները կը խոռվէ եւ «սուսե-
րական գաղտնիք» կը կոչուի : Ուրոյն սու-
րբական լեզու մը գոյութիւն չունի, կ'ըսէ,
եւ անկարելի է ընդունիլ թէ Բարեկաստանի
հարաւ բոլորովին տարբեր ցեղէ ու տարբեր
լեզուաւ զատ ազդ մը գտնուի : Ո՛չ երկու ժո-
ղովուրդ են, այլ՝ նո՛յն սեմական ժողո-
վուրդը, եւ ո՛չ երկու լեզուներ, այլ՝ զրե-
լու երկու ոմեր . — այն՝ որ akkadū է զրե-
լու ժողովրդական ոճը (démotique), sumerū
զրեկական գրութիւն մը քրմերու կամ եթէ
կ'ուզուի կոչել՝ մեհեմագրութիւն մը (hiéro-
graphie, «նուիրագրութիւն») : Անոր համար
այս իմաստով, կ'ըսէ, առնելու է սուսերա-
րէնի մասին յօրինուած Քերականութիւն-
ները, օրինակի համար՝ Langdonի զոր-
ծելը¹⁰¹, նոյնպէս այլեւայլ Բառագրքերը,

⁹⁸ Յաջորդիւ ինչպէս ասորեստանեան՝ նոյնպէս
ասուրական ձեւը կը գործածենք Ասորեստանի հա-
մար, քանի որ մեր մէջ ասորի բոլոր մասնական
իմաստ մ'առած է՝ ինչպէս ծանօթ է :
⁹⁹ Բազմաթիւ գործերէն հիմա . J. Oppert,
Etudes sumériennes. Paris 1876, pp. 111, իւր՝ Le
peuple et la langue des Mèdes. Paris 1879; եւ այլ
երկեր : — F. Lenormant, Lettres assyriolo-
giques. 2e série. Etudes accadiennes, t. I—III, Paris
1873—1879. I: pp. 207 + 143 + 151; II: pp. 382;
III: pp. 200. — Իւր՝ La langue primitive de la
Chaldée et les idiomes touraniens, étude de philo-
logie et d'histoire, suivie d'un glossaire accadien.
Paris 1875, pp. VIII + 449, եւ բազմաթիւ այլ
երկեր :

¹⁰⁰ J. Halévy, Précis d'allographie assyro-
babyloniennne. Paris 1912, pp. XXIX + 472. —
Հիմա . M. Schorr՝ ի WZKM, 1914, p. 280—300;
E. T. ի RSO, VI, 1913, p. 164—167, եւ ուրիշներ :
¹⁰¹ Հիմա . ասոր բազմաթիւ քերականական գոր-
ծերէն՝ St. Langdon, A Sumerian grammar and
chrestomathy, with a Vocabulary of the principal
roots in Sumerian, and a list of the most important
syllabic and nowel transcriptions. Paris 1911,
pp. VIII + 310. — Բաց ասորի՝ A. Delmeil, Su-
merische Grammatik der archaischen Texte.
Leipzig 1924, pp. VIII + 328. — F. Delitsch,
Grundzüge der sumerischen Grammatik. Leipzig
1914, pp. XXV + 158; իւր՝ Kleine sumerische
Sprachlehre für Nichtassyriologen; Grammatik, Vo-